ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 հունվարի շաբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

4
(3035)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՁՎԱԾԵՂ ՊԱՏՐԱՍՏՈՂ ԲՌՆԱՊԵՏԸ ՍՏԻՊՈՒՄ Է ԻՐԵՆ ՏԵՍՆԵԼԻՍ ՈՏՔԻ ԿԱՆԳՆԵԼ

Ձվածեղ պատրաստելով թափանցիկ կառավարություն ձեւավորելու իմիջի կառուցմամբ զբաղված Նիկոլ Փաշինյանն իրականում դիկտատոր է, ում ներս մտնելիս ենթակաները պետք է ոտքի կանգնեն:

Ընտանեկան երրորդ փոդքասթում վարչապետ Նիկոլ Փաշինյանը վստահեցրել է. «Չի կարող երկրի վարչապետը փողոցներում հեծանիվ քշել, ձվածեղ անել եւ լինել ավտորիտար կամ բռնապետական, սրանք սիմվոլիզմ են վերջ ի վերջո»:

Իրեն ժողովրդավար հռչակած վարչապետը մոռացել է, որ ինքն անձամբ էր հայտարարում, որ պետք չէ իրեն տեսնել ու ոտքի կանգնել, կամ իր լուսանկարը փակցնել աշխատասենյակի պատերին:

«Ժողովուրդ» օրաթերթը խոսում է փաստերով.

Կառավարության՝ 2024 թվականի դեկտեմբերի 4-ի հարցուպատասխանի ժամանակ վարչապետն ասել է. «Ես, անկեղծ ասած, շատ կնեղվեմ, եթե իմանամ, որ որեւէ մեկը իմ մասին խոսելիս ասում է՝ շեֆ»: Միգուցե Փաշինյանը մոռացել է, որ ոչ այնքան հեռավոր անցյալում՝ 2021 թվականի ընտրություններից հետո՝ հունիսի 24-ին կայացած կառավարության նիստի ժամանակ, երբ ներս մտավ դահլիճ, հատուկ ցուցումով ներկա պաշտոնյաները ոտքի կանգնեցին՝ դիմավորելու «շեֆին»: Արայիկ Հարությունյանը նոր «ստրկատիրական» բարքեր հաստատեց:

Իսկ դրանից հետո եւ՝ Կառավարությունում, եւ՝ ԱԺ-ում բաժանվեցին Նիկոլ Փաշինյանի լուսանկարները՝ մուգ շրջանակներով՝ ստիպելով, որ պետական բոլոր բարձրաստիճան աշխատակիցները փակցնեն «շեֆի» նկարները աշխատասենյակներում: Սակայն մինչ այդ՝ իր ընդդիմադիր օրերում, նույն Փաշինյանը քննադատում էր անգամ քննիչներին, որոնց սենյակում հայտնաբերել էր նախկին ղեկավարների լուսանկարները:

Բայց մենք հետհեղափոխական Հայաստանում անգամ տեսանք արդարադատության նախկին նախարար Կարեն Անդրեասյանին, ով ոգեշնչվում էր Փաշինյանի լուսանկարով:

Սրանք փաստեր են, ոչ թե լեգենդներ, որոնք ոչ մի փոդքասթով Փաշինյանը չի կարող հերքել, չեզոքացնել:

ՀՀ գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետը, իբրեւ ապօրինի գույքի լավագույն բռնագանձող՝ որպես պարգեւատրում արժանացել է ՀՀ Գլխավոր հարկադիր կատարող պաշտոնի նշանակմանը: Հայաստանի Ազգային ժողովին աջակցման ծրագրի շրջանակում Ամիրխանյանը կրտսեր փորձագետից 10 տարում դարձել է ՀՀ գլխավոր հարկադիր կատարող: Սիրո Ամիրխանյանի գլխավորած վարչության միջոցով 2024 թվականին ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդյունքում՝ ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 314,6 մլն դրամ: Բացի այդ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակում կնքված հաշտության համաձայնությունների արդյունքում ՀՀ սեփականությանը փոխանցվել է 7 անշարժ եւ 1 շարժական գույք՝ ընդհանուր շուրջ 4 միլիարդ 100 միլիոն դրամ արժեքով, ինչպես նաեւ պետական բյուջե է փոխանցվելու շուրջ 937 միլիոն դրամ, որից 364,566,167 դրամն արդեն իսկ փոխանցվել է: Հենց նման աշխատանք ապահովելով էլ Սիրո Ամիրխանյանը ստացավ բաղձալի պաշտոնի բարձրացումը:

ԵՄ անդամակցության նախաձեռնությունը հաջորդ շաբաթ կքննարկվի Ազգային ժողովի մեկնարկելիք գարնանային նստաշրջանում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ արտախորհրդարանական ուժերը հաջորդ շաբաթ հրավիրվել են խորհրդարան՝ նախաձեռնությունը ներկայացնելու: Խորհրդարանում կլինեն «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը, «Հանուն Հանրապետության» կուսակցության նախագահ Արման Բաբաջանյանը, «Հայաստանի Եվրոպական կուսակցության» ղեկավար Տիգրան Խզմալյանը. վերջինս գրեթե վստահ է՝ խորհրդադանը համաձայնություն է տալու իրենց նախաձեռնությանը: Հիշեցնենք, որ դեռ նախորդ տարի ամռանը Փաշինյանը հայտարարել էր, թե հանրաքվե չի լինելու, քանի որ ինքը գիտի հանրության տեսակետը: Բայց դե էլ ինչ Փաշինյան, որ որեւէ հարցի վերաբերյալ հաստատուն կարծիք ունենա. հիմա էլ ուրիշ բան է ասում: Վերջերս Կառավարության՝ հունվարի 9-ի նիստի ժամանակ նա հայտարարեց, որ ՀՀ-ն ԵՄ անդամ կարող է դառնալ միայն հանրաքվեի միջոցով: Թե ինչով է պայմանավորված կարծիքի այս կտրուկ փոփոխությունը, դժվար է ասել: Տիգրան Խզմալյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում կարծիք հայտնեց, որ ՀՀ իշխանությունները 3-4 ամսում հասկացան՝ ԵՄ-ին այլընտրանք չկա:



Հայաստանում տասնյակից ավելի խորհուրդներ կան տարբեր ժամանակներում ձեւավորված, սակայն դրանց աշխատանքների մասին կա՛մ չենք լսում, կա՛մ լսում ենք միայն ստեղծման պահին եւ մոռանում դրանց մասին: Նման մի խորհուրդ էլ ստեղծվել է վերջերս: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հունվարի 15-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել, որով ստեղծվել է Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհուրդ: Հաստատվել է խորհրդի անհատական կազմը, ըստ որի՝ վարչապետը համակարգող խորհրդի նախագահն է: Համաձայն ՆԳՆ պաշտոնական հայտարարության՝ Խորհրդի հիմնական նպատակն է համակարգել ռազմավարությամբ սահմանված առաջնահերթությունները եւ դրանցից բխող միջոցառումները: Եթե հաճախ նորմալ է պետական մարմնին կից խորհուրդներում պետական պաշտոնյաների աստղաբույլ տեսնելը, ապա այս դեպքում եւ՝ հասկանալի է, եւ՝ տարօրինակ: Հասկանալի է, քանի որ ԿԳՄՍ նախարարը բարեփոխման կրթական մասն է համակարգում, Անահիտ Ավանեսյանը, գուցե, առաջին բուժօգնության բլոկը, սակայն անհասկանալի է, թե 30 պաշտոնյա եւ հասարակական կազմակերպություն ի՞նչ է բարեփոխելու չարչրկված ոստիկանական համակարգում: Բացի այս խորրդից՝ ՆԳՆ-ում մի քանի խորհուրդներ եւս կան, որոնց աշխատանքի մասին չենք էլ լսել: Օրինակ՝ ՆԳՆ նախարարին կից Հասարակական խորհուրդ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին կից հասարակական խորհուրդ: Եվ հարցականն այն է, թե եւս մեկ խորհուրդ, այն էլ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ, ի՞նչ բարեփոխումներ պետք է համակարգի:

ԶՐՈՒՅՑ

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՉՈՒՆԵՆՔ ՂԵԿԱՎԱՐ», ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ զրուցել է խաղաբական գործիչ Սուրեն Պետրոսյանի հետ: Մասնավորապես քննարկել ենք Բաքվում տեղի ունեցող հայ դատանդների դատավարության վերաբերյալ հարցերը, Ռուբեն Վարդանյանի ուղերձը, ներկայիս իշանության զիջողական վերաբերմունքն ու մի շարք այլ աշխարհաքաղաքական հարցեր:

-Պարոն Պետրոսյան այսօր (չխմբ.՝երեկ) Բաքվում տեղի է ունենում Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության դատական նիստը: Ծանոթ եք հավանաբար նախօրեին արված Ռուբեն Վարդանյանի հայտարարությանը, որտեղ նշված էր, որ իրեն թույլ չեն տվել ողջամիտ ժամկետներում ծանոթանալ առաջադրված շինծու մեղադրանքին, որը կազմել է 300-400 էջ եւ ներկայացվել է միայն ադրբեջաներենով: Հայտարարությունում նշված էր նաեւ, որ իր անունից ինչ-որ փաստաթղթերի տակ կեղծ ստորագրություններ են եղել: Անդրադառնանք նախ այս շինծու դատավարություններին. ի՞նչ սպասել, քանի որ արդեն կան արձագանքներ, որ նրանցից շատերին անգամ ցմահ ազատազրկում է սպառնում:

-Ինձ չի թվում, որ պետք է որեւէ ակնկալիք ունենալ, եւ պետք չէ շեշտը դնել այն փաստի վրա՝ շինծու է, թե ոչ, որովհետեւ միջազգային իրավական որեւէ նորմ չի գործում այստեղ. հետեւաբար դրա վրա շեշտադրումը երեւի թե օգտագործվել է որպես վերջին հնարավոր գործիք, բայց չեմ կարծում՝ դա որեւէ փոփոխության կարող է բերել: Այս հարցում, որպես կանոն, փոփոխություն կարողանում են իրականացնել միայն պետությունները, որոնք շահագրգռված են լինում իրենց հայրենակիցներին փրկելու հարցերով: Մենք այսօր, ցավոք, չունենք նման իշխանություն, որը հետաքրքրված կլինի կա՛մ հայրենակիցների կյանքով, կա՛մ այս ստորացուցիչ իրականությունը փոխելու: Հետեւաբար, իմ կարծիքով, այս պահին որեւէ դրական սպասելիքներ չպետք է ունենալ: Ադրբեջանն անելու է այն, ինչ ճիշտ է գտնում, եւ որեւէ մեկը չի կարող նրան այդ հարցում խանգարել, եթե նա չուզենա, այդ դեպքում միայն չի անի: Ցանկացած միջազգային ճնշում՝ կլինի Ամերիկայի, թե Ռուսաստանի որեւէ կերպ չի կարող լուրջ լինել: Չեմ հավատում, որ կլինեն այդպիսի իրական ճնշումներ, քանզի երբ պետության շահերի համընկումներ կան, մարդկային կյանքերը այդտեղ որեւէ նշանակություն չեն ունենում. բայց այս ամենին զուգահեռ կա նաեւ մի այլ իրականություն, որը ամենացավոտն է: Այն, որ ե՛ւ Ռուբեն Վարդանյանը ե՛ւ Արցախի ղեկավարությունը, որոնք Բաքվի բանտում են, բոլորիս ամոթն ու նվաստացումն է: Գիտեմ, որ հասարակության մեջ կան նաեւ տարբեր կարծիքներ, թե՝գիտեք, տեղին է, կամ՝ խայտառակություն է: Չեմ կարող կիսել այն կարծիքը, թե դա տեղին է: Եթե անգամ դա տեղին լիներ, ապա նրանք պետք է դատվեին Հայաստանում: Ինձ համար տարօրինակ է նաեւ այս հետաքրքրությունը բացառապես Արցախի ղեկավարության կապակցությամբ, պակաս արժեք չունեն այն զինվորները գերեւարված, որոնք գնացել են իրենց կյանքը տալով պայքարելու հանուն հայրենիքի, բայց մնացել են Ադրբեջանի բանտում: Մենք նրանց հետ կապված որեւէ լուրջ քայլ չտեսանք, ինչ եղավ՝ եղավ հպանցիկ: Սա ցույց է տալիս նաեւ մեր քաղաքական մտքի տոտալ դեգրադացիան:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՆԱԽՕՐԵԻՆ ԱՐՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԵՍ ՈՉ ՄԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՉԵՄ ՍՏՈՐԱԳՐԵԼ», ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բաքվի բանտում ադօրինի դահավոր դաղբանտարկյալ, Արցախի նախկին դեսնախարար Ռուբեն Վարդանյանը, ում ուղերձը փոխանցվել է ընտանիքի միջոցով, հայտարարել է. «Ես ամուր եմ, դիմանում եմ եւ հավատում եմ, որ ճշմարտությունը հաղթելու է»:

«Ես նորից եմ հայտարարում ու պնդում իմ բացարձակ անմեղության, իմ հայրենակիցների անմեղության մասին եւ պահանջում եմ անհապաղ դադարեցնել մեր նկատմամբ այս քաղաքականացված գործը:

Չնայած մեր անմեղությանը եւ գործի քաղաքական դրդապատճառներին՝ շատ հավանական է, որ մեղադրողները կանտեսեն իմ հայտարարությունը եւ կսկսեն դատավարությունը: Այս պարագայում ես խնդրում եւ պահանջում եմ ձեզնից աջակցել իմ հետեւյալ պահանջներին՝

1. Ինձ ու իմ փաստաբանին հնարավորություն տալ լիարժեք պատրաստվել պաշտպանության: Մասնավորապես, մեզ ժամանակ եւ հնարավորություն տալ ուշադիր ծանոթանալ գործի նյութերին ռուսերենով:

2. Վերացնել թույլ տրված խախտումներն ու կեղծիքները: Մասնավորապես, ճանաչել անընդունելի բոլոր կեղծ փաստաթղթերն ու հարցաքննությունների արձանագրությունները, որոնք երբեք չեն անցկացվել, քանի որ ես ոչ մի ցուցմունք չեմ տվել իմ ձերբակալման օրվանից ի վեր:

3. Իմ եւ մյուս բոլոր մեղադրյալների նկատմամբ դատավարությունն անցկացնել հրապարակային: Ես պնդում եմ, որ լինի առավելագույնս բաց դատաքննություն՝ միջազգային լրատվամիջոցների եւ հումանիտար կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

4. Միավորել իմ գործը մյուս մեղադրյալների գործերի հետ: Իմ՝ 422 հատորանոց գործի ավելի քան 400 հատորները ընդհանուր գործի էպիզոդներ են: Դրանից միայն 6-ն է վերաբերում իմ նկատմամբ առաջադրված կեղծ մեղադրանքներին: Իմ գործի առանձնացումը արհեստական եւ անհիմն որոշում է:

Ո՛չ չարություն, ո՛չ ատելություն ես չեմ զգում: Հակառակը, ես անկեղծորեն կարեկցում եմ բոլոր նրանց, ովքեր օրենք, բարոյական սկզբունքներ ու Ղուրանի պատվիրաններ են խախտում:

Ես վստահ եմ, որ իրական խաղաղությունը հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ հակամարտությունում ներգրավված երկրների առաջնորդները, իրենց հասարակությունների հավանությամբ, կկարողանան միասին ծաղիկներ խոնարհել այս պատերազմում բոլոր ընկածների շիրիմներին:

Ես խոստանում եմ անել ամեն հնարավորը, որ դա տեղի ունենա իմ կենդանության օրոք:

Ինչպես ասել է մեծն Մահաթմա Գանդին, աշխարհն ինքնաոչնչացումից փրկելու միակ ճանապարհը առանց բռնության, ճշմարտության եւ սիրո սկզբունքներով ապրելն է: Մենք կարող ենք հասնել իրական խաղաղության բոլոր մարդկանց նկատմամբ կարեկցանքի միջոցով՝ անկախ նրանց մաշկի գույնից, ազգությունից կամ դավանանքից:

Շնորհակալ եմ բոլորին աջակցության համար: Բոլորին սիրում եմ եւ երախտապարտ եմ ՝իմ նկատմամբ բարի վերաբերմունքի համար:

Իմացեք, որ ես ամուր եմ, դիմանում եմ եւ հավատում եմ, որ ճշմարտությունը հաղթելու է»,- ուղերձում ասել է Ռուբեն Վարդանյանը:

Հիշեցնենք, որ այսօր Բաքվում ապօրինի պահվող հայ գերիների ազատ արձակման պահանջով ակցիա է անցկացվում ՄԱԿ-ի դիմաց: Ակցիայից հետո երթ կլինի դեպի ՀՀ արտաքին գործերի նախարարության շենք:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԵՎ ՊՈՒՏԻՆԸ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ

Տեղի է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Զրուցակիցները քննարկել են Եվրասիական տնտեսական միությունում Հայաստանի Հանրապետության նախագահության արդյունքները, առաջիկա անելիքները ԵԱՏՄ շրջանակներում, ինչպես նաեւ Հայաստան-Ռուսաստան երկկողմ օրակարգի մի շարք հարցեր:

ՍՓՅՈՒՌՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ Է

«Սրբազան պայքար»-ի առաջնորդ Բագրատ Սրբազանը Հայաստանի եւ սփյուռքի լայն հանրությանը կոչ է անում անվերապահ աջակցություն հայտնել Բաքվում պատանդառված հայրենակիցներին:

«Գրեթե մոռացության է տրված Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության եւ ընդհանրապես հայ գերիների՝ Բաքվի բանտերում տառապանքի մատնված լինելու հանգամանքը:

Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս այսօրվա «իշխանությունների», շարունակում է տեր չկանգնել իր զավակներին ու խրախուսում է նրանց պատանդառության հանգամանքը: Սակայն Հայաստան աշխարհը, հայ հասարակությունը եւ հայկական սփյուռքը նույնական չեն այսօրվա «իշխանությունների» հետ: Եվ մեր պատասխանն ու մեր վերաբերմունքը պետք է միանգամայն տարբեր լինեն այն վախվորած, դավաճանական եւ թշնամական շահերից բխող գործելակերպից, որը որդեգրել են այսօրվա «իշխանությունները»:

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՄԵՂԱՎՈՐ ՃԱՆԱՉՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթը փաստաբան Լիպարիտ Սիմոնյանից տեղեկացավ, որ Սյունիքի մարզի դատարանի դատավոր Գ. Աբելյանի արդարացի վերդիկտով Ջալալ Հարությունյանը մեղավոր ճանաչվեց ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ 3-րդ մասով:

Ըստ մեղադրական եզրակացության համառոտ բովանդակության՝ Ջալալ Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով պաշտպանության բանակի հրամանատարի պաշտոնը, կոչումով՝ գեներալ-լեյտենանտ, հանդիսանալով պաշտոնատար անձ՝ հանրային ծառայող, կոչման եւ պաշտոնի բերումով հանդիսանալով հրամանատար՝ ծառայողական դիրքով եւ զինվորական կոչումով տվյալ իրավահարաբերության շրջանակում ունենալով իր լիազորություններից բխող հրամաններ եւ կարգադրություններ տալու ու դրանց կատարումն ապահովելու իրավասություն, հայտարարված ռազմական դրության ժամանակ՝ 2020թ. հոկտեմբերի 12-ին, ծառայության նկատմամբ դրսեւորել է անփույթ վերաբերմունք՝ իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ եւ անփույթ վերաբերմունքի հետեւանքով դրանք կատարել է ոչ պատշաճ, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլերը հայտարարել է, որ Վրաստանի իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը երկիրը տանում է դեպի մեկուսացում իր վարած քաղաքականության պատճառով: Այս մասին Միլերը գրել է X սոցիալական հարթակում:

«Մենք վճռականորեն դատապարտում ենք բռնությունը Վրաստանի խաղաղ քաղաքացիների, ցուցարարների, լրագրողների եւ ընդդիմադիր գործիչների, ներառյալ Վրաստանի նախկին վարչապետ Գեորգի Գախարիայի դեմ: Դա «Վրացական երազանք»-ի ռեպրեսիվ մարտավարության եւս մեկ օրինակ է, որը երկիրը կթողնի մեկուսացման մեջ», - գրել է նա:

Ինչպես հաղորդել են Վրաստանի զանգվածային լրատվամիջոցները, հունվարի լույս 16-ի գիշերը Բաթումում հարձակում է կատարվել Գեորգի Գախարիայի վրա, նրան տեղափոխել են հիվանդանոց: Բժշկական օգնություն ստանալուց հետո Գախարիան իր ցանկությամբ հեռացել է հիվանդանոցից:

2024 թվականի նոյեմբերին Միացյալ Նահանգները հայտարարել է, որ դադարեցնում է ռազմավարական գործընկերությունը Վրաստանի հետ՝ Եվրամիությանն անդամակցության գործընթացը հետաձգելու՝ Թբիլիսիի որոշման եւ այդ որոշման դեմ բողոքող ցուցարարների նկատմամբ ուժ գործադրելու պատճառով:

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն ու Ամերիկայի Միացյալ Նահանգների նորընտիր առաջնորդ Դոնալդ Թրամփը կարող են ցանկացած պահի հեռախոսազրույց ունենալ: Այս մասին հայտնել է Ռուսաստանի Դաշնության նախագահի արտաքին քաղաքականության հարցերով օգնական Յուրի Ուշակովը՝ «Ռոսիա 1»-ի լրագրող Պավել Զարուբինին տված հարցազրույցում:

«Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահն ու Ռուսաստանի Դաշնության նախագահը ցանկացած պահի կարող են դառնալ հեռախոսազրույցի նախաձեռնողներ: Ավանդույթի համաձայն, սակայն, առաջին քայլն անում է նոր իշխանության եկած առաջնորդը կամ կառավարության ղեկավարը:

Մենք սպասում ենք, թե երբ Թրամփը կզանգի մեզ»,- նշել է Ուշակովը:

ՍՏԱԼԻՆԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ ԿՐԿՆՈՒՄ

ԱԼԻԵՎԻ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը վերակենդանացրել է Իոսիֆ Ստալինի ամենասարսափելի գործիքներից մեկը՝ ցուցադրական դատավարությունը, ասել է Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենո Օկամպոն:

«Ճիշտ այնպես, ինչպես 1930-ականներին Ստալինի զտումները հիմնվում էին հարկադիր խոստովանությունների եւ կեղծ դատավարությունների վրա՝ սպանելու իր մրցակիցներին եւ ամրապնդելու իր ամբողջատիրական իշխանությունը, Ալիեւն օգտագործում է դատական թատրոնը՝ իր հանցագործությունները քողարկելու համար:

Ստալինի տխրահռչակ շոու դատավարությունները թիրախ դարձան նրա ամենամոտ դաշնակիցներին՝ հին բոլշեւիկներին, ռազմական գեներալներին եւ գաղտնի ոստիկանության օպերատորներին: Այս ամենն իր գագաթնակետին հասավ մահապատիժներով, մինչդեռ ժամանակի լրատվամիջոցները չկարողացան տեսնել իրականությունը: Հատկանշական է, որ The New York Times-ի թղթակից Հարոլդ Դենին դատավարությունները համարել է արդարադատության իրական ջանքեր՝ ողբերգականորեն հավանություն տալով Ստալինի քարոզչությանը: Պատմությունը չի կարող իրեն թույլ տալ կրկնել նման սխալները: Կարո՞ղ ենք դա ավելի լավ անել 2025 թվականին:

Հունվարի 17-ին Ադրբեջանը քրեական դատավարություններ է հարուցելու Լեռնային Ղարաբաղի հայերի, այդ թվում՝ նախկին նախագահների եւ քաղաքացիական անձանց նկատմամբ, այդ թվում նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի առանձին դատավարությունը: Այս վարույթները կանխորոշված են. մեղադրյալներն արդեն իսկ դատապարտված են: Մեղադրանքները, որքան դատարկ, որքան էլ գրոտեսկային, ծառայում են որպես Ադրբեջանի ռեժիմի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի, այդ թվում՝ բանտարկյալների դեմ կատարված հանցագործությունների կոծկում:

2022 թվականի դեկտեմբերից ավելի քան 120,000 հայեր Լեռնային Ղարաբաղում համակարգային սովի են մատնվել Ադրբեջանի շրջափակման տակ: 2023 թվականի սեպտեմբերին նրանք ենթարկվեցին դաժան ռազմական հարձակման՝ պայմաններ ստեղծելով էթնիկ խմբին որպես այդպիսին ոչնչացնելու եւ լուրջ հոգեկան վնաս պատճառելու՝ Ցեղասպանության կոնվենցիայի 2-րդ հոդվածի «ձ» եւ «բ» հոդվածով ցեղասպանություն իրականացնելու երկու նյութական ձեւեր: Ադրբեջանի խորհրդարանը հստակ արտահայտել է իր մտադրությունները՝ ջատագովելով հայերին որպես ազգ ջնջելու եւ հռչակելով նրա տարածքը որպես «Արեւմտյան Ադրբեջան»:

Եթե Ալիեւն ուներ ցեղասպան մտադրություններ, ապա Լեռնային Ղարաբաղի «էթնիկ զտումները» պետք է համարել հենց ցեղասպանություն, այլապես դա հանցագործություն է մարդկության դեմ՝ հալածում, բռնի տեղահանում եւ տեղահանում:

Հարյուրավոր ադրբեջանցի այլախոհներ շարունակում են մնալ բանտարկված Ալիեւի ռեժիմի օրոք՝ զրկված լինելով արդար դատավարության ցանկացած հեռանկարից: 2025 թվականի հունվարի 6-ին Ադրբեջանում քրեական դատավարություն սկսվեց Ֆրանսիայի քաղաքացի Մարտին Ռայանի դեմ՝ խորացնելով երկու երկրների միջեւ առկա լարվածությունը: Ռայանը մեղադրվում է լրտեսության մեջ՝ իբր Թուրքիայի եւ Պակիստանի հետ Ադրբեջանի ռազմական համագործակցության վերաբերյալ տեղեկություններ հավաքելու եւ ֆրանսիական հետախուզության համար ֆրանսախոս ադրբեջանցիների հավաքագրելու մեջ:

Դատախազները պնդում են, որ նա նաեւ հանդես է եկել որպես միջնորդ՝ նպաստելով ֆրանսիական հետախուզության եւ Ադրբեջանի քաղաքացի Ազադ Մամեդլիի միջեւ կապին, ով այժմ դատարանում է պետական դավաճանության համար: Այլախոհների կամ Ֆրանսիայի քաղաքացիների դեմ մեղադրանքները, լավագույն դեպքում, կասկածելի, կարելի է բնութագրել որպես համակարգային հարձակում խաղաղ բնակչության դեմ, հետեւաբար՝ մարդկության դեմ հանցագործություն:

Սա մեկուսացված միջադեպ չէ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ԱՄՆ Պետդեպարտամենտի, Amnesty International-ի, Human Rights Watch-ի եւ Freedom House-ի անկախ զեկույցները բոլորն էլ միակարծիք են, որ Ադրբեջանը չունի անկախ դատական համակարգ: 2021 թվականին դատական անկախության հազվագյուտ օրինակում դատավոր Մեհրիբան Սուլեյմանովան վճիռ է կայացրել կառավարության կողմից աջակցվող սուբյեկտի դեմ: Նրա պատիժն արագ էր՝ նրան ազատեցին աշխատանքից:

Միջազգային հանրությունը պետք է գործի. ժամանակակից Ադրբեջանում ստալինյան ժամանակաշրջանի այս ցուցադրական դատավարությունները ոչ միայն տեղական շոու են, այլ հաշվարկված փորձ՝ շեղելու ուշադրությունը Ալիեւի հանցագործություններից եւ ուժեղացնելու նրա իշխանությունը: Բաքվի դատարաններում յուրաքանչյուր դատավորի հարվածը անարդարությամբ է հնչում, եւ խայտառակում է համաշխարհային հանրությանը, որը թույլ է տալիս դա շարունակել:

Ժամանակն է մերկացնել Ալիեւի բռնապետությունն ու նրա դաշնակիցներին:

Խոսեք բոլոր ապօրինի ձերբակալվածների օգտին եւ լսեք նրանց ձայնը: Պահանջել նրանց անվերապահ ազատ արձակել»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԻՆՉԵՎ 14 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻՆ ԱՌԱՆՑ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՎԻԶԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳ

2025թ. հունվարի 17-ից վերստին գործում է մինչեւ 14 տարեկան երեխաներին առանց հարցազրույցի վիզա տրամադրելու կարգը: Այս մասին հայտնել են ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատնից:

Առանց հարցազրույցի վիզա ստանալու պահանջներին բավարարող մինչեւ 14 տարեկան երեխաների դեպքում, որոնք ունեն գործող ՀՀ անձնագիր կամ կացության քարտ, փաստաթղթերը կարող են պարզապես ուղարկվել դեսպանատուն սուրհանդակային ծառայության միջոցով:

ԹԲԻԼԻՍԻԻ ԱՌԱՋԱՐԿԸ՝ ԲԱՔՎԻՆ ՈՒ ԵՐԵՎԱՆԻՆ

Վրաստանն Ադրբեջանին եւ Հայաստանին առաջարկում է տարբեր ոլորտներում եռակողմ համագործակցության նախաձեռնություն: Այդ մասին հայտարարել է Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն Բաքվում տեղի ունեցած տնտեսական համագործակցության վրացադրբեջանական միջկառավարական հանձնաժողովի նիստի ժամանակ:

«Մենք անկեղծորեն շահագրգռված ենք գործնական քայլեր իրականացնելու եւ տարածաշրջանում համագործակցությանը նպաստելու հարցում»,- ասել է Կոբախիձեն:

Նախօրեին Վրաստանի արտաքին գործերի նախարար Մակա Բոճորիշվիլին ասել էր, որ անհրաժեշտության դեպքում Վրաստանը կգործարկի իր ողջ ներուժը, որպեսզի Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ խաղաղություն ձեռք բերվի:

ԻՆՉՈՒ ԻՐԵՆ ԿՅԱՆՔԻՑ ՋՐԿԵՑ ԳԵՈՐԳԻ ԿՈՒՏՈՅԱՆԸ

ՀԱՐՅԱՔՆՆՎԱԾ ՀԱՐԵՎԱՆՆԵՐՆ ՈՒ ԱԱԾ ՆԱԽԿԻՆ ՏՆՕՐԵՆԸ՝ ԴԵՊՔԻՑ 5 ՏԱՐԻ ԱՆՑ

2020 թվականի հունվարի 17-ին իր բնակարանում հայտնաբերվել էր Ազգային անվտանգության ծառայության նախկին տնօրեն Գեորգի Կուտոյանի դին:

Ինչպես ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, Գեորգի Կուտոյանի դին հայտնաբերվել էր քունքի շրջանում հրազենային վնասվածքով: Կուտոյանի հետ դեպքը տեղի էր ունեցել նախօրեին, երբ նա տանը միայնակ էր, իսկ կինն ու երեխան եղել են ծնողների տանը: Հայտնել էինք նաեւ, որ կրակոցն արձակվել է իրեն պատկանող զենքից, տան սենյակի պատերին 35 կրակոցի հետքեր էին առկա եղել: Դեպքից անմիջապես հետո հարուցվեց քրեական գործ՝ 110 հոդվածի 1-ին մասով (ինքնասպանության հասցնել):

Դեպքի վայրում հայտնաբերվել է «Glock» տեսակի ատրճանակ: Տեղում պարզվել էր, որ զենքը օրինական է: Կուտոյանը զենքը ստացել էր Վրաստանի անվտանգության ղեկավարի կողմից՝ պարգեւատրման կարգով: Կուտոյանին գտել են մահացած 2018 թվականի իշխանափոխությունից 2 տարի անց ու առաջին վարկածը, որ առաջ քաշվեց, նա էր, որ Գեորգի Կուտոյանը ահռելի ինֆորմացիայի էր տիրապետում ու միգուցե նրան իշխանափոխությունից հետո ասել են կա՛մ պետք է ցուցմունք տաս նախկին իշխանության դեմ, կա՛մ կալանավորվես: Իսկ նա նախընտրեց ինքնասպան լինել:

Մեկ այլ վարկածի համաձայն՝ նա չհամակերպվեց այսօրվա իրականության հետ:

Վարկածներ, որոնք մինչ օրս առաջ են քաշվում ու դեռեւս մնում են օդից կախված:

Իսկ ի՞նչ են պատմում Գեորգի Կուտոյանի մտերիմները, հարցաքննված հարեւանները:

Ազգային անվտանգության ծառայության նախկին տնօրեն Միքայել Համբարձումյանը հիշում է՝ ինչպես Գեորգի Կուտոյանը մտավ Ազգային անվտանգության ծառայության շենք, ու ԻՆՉ ԻՆՔԸ ԶԳԱՑ՝ ԼՍԵԼՈՎ ՆՐԱ ԻՆՔՆԱՍՊԱՆ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ի վերջո ինչի՞ն չդիմացավ Գեորգի Կուտոյանը՝ այդքան երիտասարդ տարիքում վերջ տալով իր կյանքին, ի՞նչ փուլում է նրա ինքնասպանության գործը դեպքից 5 տարի անց: Այս հարցերի պատասխանը ArmLur.am-ը փորձեց պարզել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեից, որտեղից ի պատասխան հայտնեցին՝ քննությունը շարունակվում է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԽԻԹԱՐ ԳԱԼԵՅԱՆԻ ՀՈՐ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԵՑ ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ

Մխիթար Գալեյանի հոր նկատմամբ 1 տարի 6 ամիս ժամկետով կիրառվել է տնային կալանք: Այս մասին հայտնել է իրավապաշտպան Ռուբեն Մելիքյանը:

«Նիկոլը մի դակիչի միջոցով որոշեց նահատակ զինվորի հայր Գարիկ Գալեյանին պատժել 2 տարի ռեալ ազատազրկմամբ, ու միաժամանակ անմիջապես փոխել խափանման միջոցն ու Գարիկին ուղարկել տնային կալանքի»,- գրել է նա:

ԷԴԳԱՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ՝ ԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Էդգար Հովսեփյանը նշանակվել է արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար:

Որոշումը ստորագրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ԲԱՔՎԻ ԿԵՂԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ԿՊԱՇՏՊԱՆԻ 6 ԴԱՏԱԽԱԶ

Ադրբեջանի գլխավոր դատախազությունը հաղորդագրություն է տարածել կեղծ մեղադրանքներով Բաքվում ապօրինի պահվող հայ գերիների նկատմամբ դատավարության մեկնարկի վերաբերյալ:

Հաղորդագրության մեջ նշվում է, որ դատավարության ժամանակ, այսպես կոչված, պետական մեղադրանքը պաշտպանելու է Ադրբեջանի 6 դատախազ:

«Գլխավոր դատախազ Քամրան Ալիեւի համապատասխան կարգադրությամբ ստեղծվել է դատախազության աշխատակիցների խումբ, որը կպաշտպանի Արկադի Ղուկասյանի, Արայիկ Հարությունյանի, Բակո Սահակյանի, Դավիթ Իշխանյանի, Դավիթ Մանուկյանի, Դավիթ Բաբայանի, Լեւոն Մնացականյանի, Վասիլի Բեգլարյանի, Էրիկ Ղազարյանի, Դավիթ Ալահվերդյանի, Գուրգեն Ստեփանյանի, Լեւոն Բալայանի, Մադաթ Բաբայանի, Գարիկ Մարտիրոսյանի, Մելիքսեթ Փաշայանի եւ Ռուբեն Վարդանյանի նկատմամբ հարուցված քրեական գործերով պետական մեղադրանքը»,- ասված է Ադրբեջանի դատախազության հաղորդագրության մեջ:

Շինծու գործը քննվում է Բաքվի զինվորական դատարանում՝ դատավոր Ջեյնալ Աղաեւի նախագահությամբ:

Թվարկված անձանց Ադրբեջանն ապօրինի ձերբակալել եւ կեղծ մեղադրանքներ է առաջադրել 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական ագրեսիայից հետո: Ադրբեջանը հաստատում է իր մոտ 23 հայ գերու առկայությունը:

ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱԿԱՆ ԿԱՅՔԵՐԻՑ ՀԱՓՇՏԱԿԵԼ ԵՆ ԽՈՇՈՐ ՉԱՓԻ ԳՈՒՄԱՐ

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է համակարգչային հափշտակություն կատարելու հերթական դեպքի առթիվ քննվող քրեական վարույթի նախաքննությունը՝ չորս տարբեր հանցավոր խմբերում ընդգրկված յոթ անձանց մասով:

Նախաքննության ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ 2021 թվականի հունիս-օգոստոս ամիսներին մի խումբ անձինք, նախնական համաձայնությամբ, ՀՀ-ում գործող ընկերություններին պատկանող բուքմեյքերական կայքերում գրանցված մի շարք խաղային հաշիվներից հափշտակել են առանձնապես խոշոր չափերի գումար: Պարզվել է, որ այդ միջոցների մի մասը հափշտակվել է չորս տարբեր հանցավոր խմբերում ընդգրկված յոթ անձանց եւ վերջիններիս հետ հանցավոր համաձայնության եկած եւ հանցավոր խմբում ընդգրկված անձանց կողմից:

Հիշյալ հանցավոր խմբերում ընդգրկված անձինք տեղյակ լինելով ՀՀ-ում գործող երկու բանկերի բանկոմատների ծրագրային ապահովման թերության մասին՝ ՀՀ տարածքում գործող ընկերությունների բուքմեյքերական կայքերում իրենց եւ այլ անձանց անվամբ գրանցված խաղային հաշիվներին գումարներ են մուտքագրել եւ մուտքագրված դրամական միջոցների արհեստական շրջանառությունն ապահովելու նպատակով կատարել են պարտության ցածր հավանականություն ունեցող խաղադրույքներ: Այնուհետեւ օգտվելով ծրագրային այդ թերությունից, օգտահաշվին գոյացած դրամական միջոցները բազմաթիվ կանխիկացման գործարքներով երկու տարբեր բանկոմատից միաժամանակ կանխիկացրել են՝ հափշտակելով առանձնապես խոշոր չափերի՝ առնվազն 55 մլն 480 հզր ՀՀ դրամ գումար:

Բացի այդ, քննությամբ հիմնավորվել է նաեւ, որ հիշյալ հանցավոր խմբերի անդամները 2022 թվականի փետրվարին կրկին օգտվելով բանկոմատներից գումար կանխիկացնելու բնականոն ընթացքն ապահովող ծրագրային թերությունից՝ համակարգչային հափշտակությամբ ձեռք են բերել առանձնապես խոշոր չափերի՝ առնվազն 55 մլն 636 հզր ՀՀ դրամ:

Հիշյալ յոթ անձանցից մեկի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 257-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով կատարված համակարգչային հափշտակությունը) եւ 257-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (խոշոր չափերով կատարված համակարգչային հափշտակությունը), մեկ անձի նկատմամբ՝ 257-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով կատարված համակարգչային հափշտակությունը) (2 դրվագ), երկու անձի նկատմամբ՝ 257-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված խոշոր չափերով համակարգչային հափշտակությունը) եւ 257-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով կատարված համակարգչային հափշտակությունը), երեք անձի նկատմամբ՝ 257-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով կատարված համակարգչային հափշտակությունը) (2 դրվագ):

Չորս անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, մեկ անձի նկատմամբ՝ վարչական հսկողությունը, իսկ երկու անձի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

Վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

Հանցավոր խմբերում ներառված մյուս անձանց, ինչպես նաեւ այլ հանցավոր խմբերի մասով նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 15-ից 16-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 131 դեպք, որից 11-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

Ո՞ՒՄ ԵՆ ՊԱՐԵԿ ՆՇԱՆԱԿԵԼ

Տավուշի մարզում անտառների անօրինական հատումը մեծ թափով շարունակվում է: Իջեւանի անտառտնտեսության անտառապետերից մեկը, ով չցանկացավ, որ իր անունը հրապարակվի, ասաց, որ իրենց աշխատավարձը ընդամենը 130 հազար դրամ է, դրանով ընտանիք չեն կարողանում պահել: Նա ասաց, որ անտառտնտեսության հին, կիսագրագետ անտառապահներին այժմ անտառային պարեկներ են կոչում, նրանք իրենցից շատ աշխատավարձ են ստանում, սակայն ո՛չ անտառխախտման արձանագրություն են կարողանում կազմել, ո՛չ էլ տեխնիկական զինվածություն ունեն: Անտառապետն ասաց, որ Տավուշի մարզում ապօրինի անտառհատումների հետեւում կանգնած են վարչապետ Նիկոլ Փաշինյանի մերձավոր պաշտոնյաները: Վերջին տարիներին Իջեւանի, Սեւքարի անտառտնտեսություններում հատումներից զատ, փայտի բիզնեսով զբաղվողները Իջեւանի համայնքի Գանձաքար գյուղի կողմից մտել են Բերդի համայնքի տարածք ու հատում են Արծվաբերդի անտառտնտեսության Իծաքարի, Նավուրի անտառները:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻՆ ԲԱՆԻ ՏԵՂ ՉԻ՞Ղ ԴՆՈՒՄ

Տավուշի մարզպետարանը հայտնում է, որ հունվարի 15-ին Տավուշի մարզում մեկնարկել է 2025 թվականի ձմեռային զորակոչը: Տավուշի մարզի Իջեւան եւ Դիլիջան համայնքներից պարտադիր զինվորական ծառայության է մեկնել զորակոչիկների հերթական խումբը: Տավուշի մարզպետարանի հաղորդագրության մեջ նշում չկա այն մասին, որ զորակոչիկներին ծառայության ճանապարհողների մեջ է եղել Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, ով Դիլիջան համայնքի բնակիչ, ծառայության մեկնողներին նվերներով տոպրակներ է հանձնել: Տավուշի մարզպետարանը Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետին բանի տեղ չի՞ դնում: Այդպես է լինում, նման վերաբերմունք է ցուցաբերվում, երբ Նիկոլ Փաշինյանի քավոր, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի հովանու ներքո Դավիթ Սարգսյանը Դիլիջան համայնքի հողերը շուկայականից ցածր գներով օտարում է Երեւան քաղաքի եւ Հայաստանի այլ վայրերի բնակիչներին:

ԱՅՍ ՏԱՐԻ ՔՉԵՐՆ ԷԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ԵԿԵԼ ԲԵՐԴ

Տավուշի մարզի Բերդ համայնքից հայտնում են, որ նախորդ տարիների համեմատ տարեմուտին նախատոնական առեւտրի ծավալները էական չափով նվազել էին: Դա բացատրվում է այն բանով, որ սահմանագոտու բնակիչները ֆինանսական հնարավորություն եւ տրամադրություն չունեն ամանորը ճոխ նշելու: Ամեն տարի՝ տարեմուտից առաջ, Ռուսաստանից մեծ թվով Բերդ համայնքի բնակավայրերից սերվածներ էին ավտոմեքենաներով վերադառնում իրենց ծննդավայր, որպեսզի հայրենի շենում դիմավորեն ամանորը: Այս անգամ Բերդ համայնքում ռուսական համարանիշերով քիչ ավտոմեքենաներ են հայտնվել: Պատճառը Ռուսաստանում տնտեսական վիճակի վատացման հետեւանքով այնտեղ ապրող հայերի ֆինանսական վիճակի վատթարացումն է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԱՅՆ ԼՐԱՑՆԵԼ

59 ՀԶ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Ֆիզիկական անձինք 2024 թվականի հաշվետու տարվա համար հայտարարագրերը ներկայացնելու են մինչեւ 2025 թվականի մայիսի 1-ը ներառյալ:



2024 թվականի հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ-հայտարարագիր պետք է ներկայացնեն ինչպես նախորդ տարվա՝ 2023 թվականի հաշվետու տարվա համար հայտարարագիր ներկայացնողները, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նոր խմբեր.

2024 թվականի ընթացքում վարձու աշխատող համարված ՀՀ քաղաքացիները:

2024 թվականի ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում հարկվող եկամուտ ստացած ՀՀ քաղաքացիները:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական եւ համայնքային ծառայողները, հանրային պաշտոններ զբաղեցնող ՀՀ քաղաքացիները:

2023 թվականի արդյունքներով 1 մլրդ դրամ եւ ավելի համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առեւտրային կազմակերպությունների՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մասնակից (բաժնետեր, փայատեր, անդամ) հանդիսացող ՀՀ քաղաքացիները:

Հայտարարագիր ներկայացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել ID նույնականացման քարտ: Ստանալուց հետո մոտենում եք ձեր հեռախոսահամարի օպերատորի գրասենյակ՝ Viva, Ucom, Team եւ այլն: Իրենց օգնությամբ ստանում եք էլեկտրոնային ստորագրություն՝ mID:

Այնուհետեւ, անհրաժեշտ է մոտենալ այն բանկեր, որոնց միջոցով անհրաժեշտ է ստանալ ձեր աշխատանքի վարձատրության կամ փոխանցումների քաղվածքները, որտեղ կերեւա 2024 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի ֆինանսական շարժը:

Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը հավաքելուց հետո, Պետական եկամուտների կոմիտեի կայքի միջոցով կամ հեռախոսային ծրագիրը ներբեռնելու միջոցով սկսում եք լրացնել անհրաժեշտ տվյալները:

Լրացնելիս կհանդիպեք 2 դաշտերի՝ հարկվող եկամուտներ եւ չհարկվող եկամուտներ:

Հարկվող եկամուտներ պատուհաններում ավտոմատ կերպով լրացվում է տվյալներ, եթե նախորդ տարի 2024 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը եղել եք գրանցված աշխատող եւ այդ հաստատության հաշվապահը ձեր հարկերը վճարել է: Նույն ընթացակարգը գործում է նաեւ քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատելու դեպքում: Չհարկվող եկամուտներ դաշտը անհրաժեշտ է լրացնել ինքնուրույն: Այստեղ անհրաժեշտ է լրացնել բանկի քաղվածքով երեւացող բոլոր եկամուտները, որքան փոխանցումներ են եղել ձեր քարտին կամ հաշվեհամարին: Այս դաշտում լրացված տեղեկությունների համար ՊԵԿ-ը հարկ չի պահանջում:

Հարկ է նշել, որ հաջորդ տարվանից, երբ 2026 թվականին ներկայացնենք 2025 թվականի հայտարարագիր անգամ նվիրատվությունը եւ անգամ փոքրիկ գումար հայտարարագրելու դեպքում այն կհարկվի:

Պետական եկամուտների կոմիտեում սրա վերաբերյալ ռիսկեր չեն տեսնում, որ կնվազի անկանխիկ շրջանառությունը եւ շատերը չհարկվելու համար կնախընտրեն կանխիկ դրամի շրջանառությունը:

ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանն էլ, երեկ ամփոփելով 2024 թվականի աշխատանքները, խոսելով հայտարարագրման ներդրման համակարգից, նշել է, որ մոտ 59 հազար քաղաքացի արդեն հայտարարագիր է ներկայացրել:

Էդուարդ Հակոբյանն ընդգծեց, որ ՊԵԿ-ն առաջիկայում կառաջարկի նվազագույն գումարի շեմ, որից ցածր քաղաքացիները չպետք է հարկ վճարեն անհատույց ստացված գումարների համար (այդ թվում՝ արտասահմանից փոխանցումների), թեեւ դրանք պետք է նշեն հայտարարագրում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՀԱՋԱՆԳ

«Հետք»-ը հայտնել էր, որ Ախուրյանի ավագանու ՔՊ խմբակցության ղեկավար Մարտիկ Մաթոսյանին եւ նրա մորը պատկանող «Սոֆոն» եւ «Սմարթվեյվ» ՍՊԸ-ները 2021-2024 թթ.-ին պետական տարբեր գերատեսչությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ կնքել են 99 պայմանագիր: Պայմանագրերի ընդհանուր գումարը կազմել է 125,5 մլն դրամ: Այս ընկերությունները համայնքներին եւ պետական գերատեսչություններին մատակարարել են համակարգիչներ եւ համակարգչային սարքավորումներ, սկանավորման եւ բազմաֆունկցիոնալ տպիչ սարքեր:

«Սոֆոն» ՍՊԸ-ի տնօրենը Մարտիկ Մաթոսյանն է: Նա Ախուրյան համայնքի ավագանու ՔՊ խմբակցության ղեկավարն է, նաեւ՝ ֆինանսաբյուջետային հանձնաժողովի նախագահը: 2021թ.-ին հիմնադրված «Սոֆոն» ՍՊԸ-ի 100% բաժնետերը նրա մայրն է՝ Կարինե Գաբրիելյանը:

Մարտիկ Մաթոսյանը «Սմարթվեյվ» ՍՊԸ-ի սեփականատերն է: Այս ընկերությունը եւս ակտիվ է պետական գնումներում: 2024 թվականին Ախուրյան համայնքը «Սմարթվեյվ» ՍՊԸ-ի հետ 2 պայմանագիր է կնքել՝ ընդհանուր 1 մլն 350 հազար դրամի:

ՍՈՒՐ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԱՃ

Հայաստանում 2025 թվականի հունվարի երկրորդ շաբաթվա տվյալների համաձայն գրանցվել է սուր շնչառական վարակներով պայմանավորված ակտիվության աճ. առողջության առաջնային պահպանման կազմակերպություններ հունվարի երկրորդ շաբաթվա ընթացքում դիմել են 7278 բուժառու:

Այս մասին ասել է ՀՀ առողջապահության նախարարության Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի (ՀՎԿԱԿ) վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության վարչության բժիշկ-համաճարակաբան Աիդա Հովհաննիսյանը՝ նշելով, որ այս ցուցանիշը նախորդ շաբաթվա համեմատ բարձր է 2,6 անգամ, սակայն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դեռեւս ցածր է 1,3 անգամ:

«Թոքաբորբով պայմանավորված ցուցանիշը նախորդ շաբաթվա համեմատ բարձր է 3,1 անգամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ բարձր է 2,1 անգամ: Նշեմ, որ սուր շնչառական վարակներով պայմանավորված դիմելիության 71,1 տոկոսը կազմում են 0-18 տարեկան երեխաները, թոքաբորբով պայմանավորված դիմելիության 66,3 տոկոսը եւս 0-18 տարեկաններն են:

Հունվարի 14-ի դրությամբ առկա տվյալներով սուր շնչառական վարակներով Հայաստանի բուժհաստատություններում հոսպիտալացված է 704 բուժառու, որոնց 90,7 տոկոսը էլի կազմում են 0-18 տարեկան երեխաները»,- ասել է մասնագետը: Նա նշել է, որ հունվարի 14-ի դրությամբ թոքաբորբով հոսպիտալացվել են 544 բուժառու, որոնց 63 տոկոսը կազմում են 0-18 տարեկան երեխաները: Վերակենդանացման բաժանմունքում սուր շնչառական վարակներով եւ թոքաբորբով պայմանավորված հոսպիտալացվել են 64 բուժառու, որոնց 73 տոկոսը եւս 0-18 տարեկան երեխաներն են:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 18 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԸՆԹԱՑԻԿ

ԻՆՉ ՀԱՐԿԵՐ ՊԵՏՔ Է ՎՃԱՐԵԼ՝ 2025-ԻՑ

Հայաստանում հունվարի մեկից մի քանի հարկատեսակներ կտրուկ աճել են կապված հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ինչ փոփոխություններ են տեղի ունեցել հարկային օրենսգրքում եւ ինչ տոկոսային հարաբերակցություն է փոփոխվել:

Հայաստանում 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտել հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններ, որոնք ազդում են փոքր եւ միջին բիզնեսի վրա: Մասնավորապես, շրջանառության հարկի դրույքաչափերը բարձրացվել են՝ 5%-ից հասնելով մոտ 10%-ի: Այս փոփոխությունը նպատակ ունի կրճատել հարկման ընդհանուր համակարգում առկա հարկային բեռի եւ շրջանառության հարկի համակարգի հարկային բեռի միջեւ տարբերությունը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է, որ այս փոփոխությունը միտված է խոշոր բիզնեսների ստվերը կրճատելուն եւ փոքր բիզնեսի համար նոր հնարավորություններ ստեղծելուն: Նա ընդգծել է, որ ՓՄՁ-ները կարող են կրճատել իրենց հարկային բեռը, եթե ողջ շրջանառությունը փաստաթղթավորված լինի:

Բանն այն է, որ նման կերպ փոքր եւ միջին ձեռնարկատիրությունների սեփականատերերը չեն ցանկանում աշխատել, քանի որ շատերի համար փակուղի է ստեղծվում, եւ նրանք մտածում են՝ դադարեցնելը կլինի միակ ճիշտ ելքը:

Այնուամենայնիվ, գործարարները մտահոգություն են հայտնել, որ այս փոփոխությունները կարող են բարդացնել իրենց գործունեությունը:

Բացի այդ, 2025 թվականի հունվարի 1-ից Երեւանում դադարեցվել է հիփոթեքային վարկի դեպքում եկամտահարկի վերադարձի օրենքի կիրառումը: Այս օրենքը նախկինում հնարավորություն էր տալիս հիփոթեքային վարկ ունեցող քաղաքացիներին հետ ստանալ իրենց վճարած եկամտահարկը այնքան չափով, որքան վարկի տոկոսներ էին վճարում: Այս փոփոխությունը կարող է ազդել անշարժ գույքի շուկայի վրա:

Հավելենք, որ 2025 թվականին Հայաստանում գրանցված աշխատողի համար հարկերն ու պարտադիր վճարումները ներառում են հիմնական տեսակներ՝

Եկամտային հարկ. 2023 թվականից եկամտային հարկի համահարթ դրույքաչափը սահմանվել է 20%:

Կուտակային կենսաթոշակային վճար. Աշխատողը կատարում է իր ամսական եկամտի 5% չափով կուտակային վճար, իսկ պետությունը հավելում է եւս 5%՝ սահմանված առավելագույն շեմի սահմաններում:

Սոցիալական վճար (որոշ դեպքերում). Կիրառվում է, եթե աշխատավարձը գերազանցում է որոշակի շեմ:

Սա կարող է լինել լրացուցիչ գանձվող հարկ՝ կախված եկամտի չափից:

Fastex

Գ

20 ՄԼՆ ԴՐԱՄ՝ «ԱՐՄԱԹ»-Ի ՎԵՐԱԶԻՆՄԱՆԸ

Fastex-ն «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցների վերազինմանը տրամադրել է 20 մլն դրամ: Նախաձեռնության շրջանակում հունվարի 13-ին տեղի է ունեցել Դիլիջանի բազմագործառութային ոլեական ֆոլեջի «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցի բացման արարողությունը: Ընդհանուր առմամբ այս համագործակցությամբ բացվել է մեկ եւ վերազինվել 32 աշխատանոց, որոնցից 16-ը՝ Տավուշի, իսկ 17-ը՝ Շիրակի մարզում:

Բացման միջոցառմանը ներկա են եղել «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի համահիմնադիր Ռոման Բադալյանը, «Ֆասթեքս» ընկերության գործադիր տնօրեն Վախթանգ Աբրահամյանը, ԱՏՁՄ նախագահ Ալեքսանդր Եսայանը, ԱՏՁՄ գործադիր տնօրեն Սարգիս Կարապետյանը:

Ծրագրի շրջանակում աշխատանոցներին տրամադրվել են համակարգիչներ, իրականացվել են եռաչափ տպիչների եւ շաղափային հաստոցների վերազինման աշխատանքներ, համալրվել է ռոբոտաշինության հավաքածուն:

«Նման աշխատարաններ, ինչպիսին «Արմաթն» է, շատ մեծ դեր ու կարեւորություն ունեն սերունդների կրթության ու հետագայում՝ երկրի զարգացման գործում: Կրթությունն ու գիտությունը մեր երկրի զարգացման ամենամեծ գրավականն է:

Ֆասթեքը մեծ կարեւորություն է տալիս SS ոլորտի առաջխաղացմանը: Մեր կարեւոր նպատակներից մեկը Հայաստանում տեխնիկական կրթության բազան ուժեղացնելն է», - իր խոսքում նշել է «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի համահիմնադիր Ռոման Բադալյանը:

ԱՏՁՄ նախագահ Ալեքսանդր Եսայանն ընդգծել է տեխնոլոգիական ու ինժեներական կրթության կարեւորությունը եւ նմանատիպ նախագծերի իրականացումը՝ արագ զարգացող իրականության մեջ: Միջոցառման ընթացքում ցուցադրվել են Դիլիջանի եւ Տավուշի մարզում գործող «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցների սաների աշխատանքները՝ անօդաչու թռչող սարքեր, մրցույթներում հաղթած ռոբոտներ եւ այլ նախագծեր:

Արմաթ ծրագիրն իրականացնում է Առաջատար Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միությունը՝ սկսած 2011-ից: Արմաթը, հասանելի լինելով ամեն 2-րդ դպրոցում, երեխաներին հնարավորություն է տալիս օգտվելու տեխնոլոգիական ու ճարտարագիտական կրթության առավելություններից: Ծրագրի նպատակն է հնարավորություն տալ դպրոցականներին ստանալ ճարտարագիտական կրթություն, կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում, ձեւակերպել եւ լուծումներ գտնել իրենց եւ համայնքի խնդիրների համար: «Արմաթն» ունի շուրջ 650 աշխատանոց Հայաստանում եւ 7 այլ երկրներում՝ Վրաստանում, Հնդկաստանում, ԱՄՆ-ում, Էսվաթինիում, Բանգլադեշում, Ֆրանսիայում եւ Քուվեյթում:

Վերազինման աշխատանքները սաներին հնարավորություն կտան կրկին օգտվել աշխատանոցի հնարավորություններից եւ առավել արդյունավետ պատրաստվել ընթացիկ մրցույթներին՝ներկայացնելով իրենց նախագծերը:

Fastex-ը, հավատարիմ մնալով սոցիալական պատասխանատվության իր առաքելությանը, շարունակական աջակցություն է ցուցաբերում Հայաստանում կրթության զարգացմանը եւ նորարարական գաղափարների առաջխաղացմանը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԻՆՉ ԱՐԺԵՆ ԱՎԻԱՏՈՄՍԵՐԸ ԴԵՊԻ ԻՏԱԼԻԱ

Հարուստ մշակույթով, տեսարժան վայրերով աչքի ընկնող Իտալիան հասցրել է գերել բոլորի սրտերը: Այս երկիրը հայտնի է իր պատմական հուշարձաններով, արվեստով, ճարտարապետությամբ եւ, իհարկե, խոհանոցով:

Շատերը իրենց հանգիստը ցանկանում են անցկացնել Իտալիայում: «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվել է, թե ինչ արժեն Երեւան-Իտալիա թռիչքների ավիատոմսերը՝ հունվարի 17-ից մինչեւ հունվարի 20-ը:

Այսպիսով՝ հունվարի 17-ին WizzAir-ի միջոցով դեպի Հռոմ ուղիղ թռիչքը 4 ժամ 25 րոպեի համար կարժենա 52 հազար դրամ իսկ 17 ժամ 10 րոպեի համար ոչ ուղիղ թռիչքը՝ 66 հազար 920 դրամ:

Kiwi.com-ում 31 ժամ 20 րոպե թռիչքի արժեքը 77 հազար 860 դրամ է:

Հունվարի 18-ին WizzAir-ում 4 ժամ 25 րոպե ուղիղ թռիչքի արժեքը 33 հազար դրամ է, Kiwi.com-ում 17 ժամ 30 րոպե տեւողությամբ թռիչքը՝ 59 հազար դրամ: Mytrip.com-ում 15 ժամ 50 րոպե թռիչքը 61 հազար 740 դրամ է:

Կիրակի՝ հունվարի 19-ին WizzAir-ում 14 ժամ 20 րոպե ոչ ուղիղ թռիչքը 48 հազար դրամ է: Kiwi.com-ում 17 ժամ 5 րոպե ոչ ուղիղ թռիչքը 56 հազար 250 դրամ է:

Հունվարի 20-ին Kiwi.com-ում 6 ժամ 20 րոպե ոչ ուղիղ թռիչքի արժեքը 40 հազար դրամ է: 28 ժամ 20 րոպեն՝ 43 հազար դրամ, City.Travel-ում 17 ժամ 10 րոպե թռիչքը 48 հազար դրամ է:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ՝ «ԾԱՆՈՒՑՄԱՆ» ԷԼ. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ մաքսային բարեփոխումների շրջանակում, 2025 թվականի հունվարից մաքսային մարմնում մեկնարկել է «Ծանուցման» էլեկտրոնային համակարգի ամբողջական ներդրման գործընթացը:

Կոմիտեն հայտնում է, որ 2025 թվականի հունվարի 18-ից Երեւանի Իսակովի 10 հասցեում գտնվող մաքսային սպասարկման սրահ (մաքսային մարմնի ծածկագիր՝ 05100010) ֆիզիկապես այցելելու անհրաժեշտություն այլեւս չկա:

Ապրանքների հայտարարագրերի սպասարկումը կիրականացվի «Ծանուցման» էլեկտրոնային համակարգի միջոցով՝ հեռավար եղանակով: Ապրանքների հայտարարագիրը ներկայացվելուն պես, մաքսային ծառայողն ինքնաշխատ համակարգի միջոցով անմիջապես կստանա էլեկտրոնային ծանուցում՝ հայտարարագրի ներկայացված լինելու վերաբերյալ եւ կիրականացնի անհրաժեշտ մաքսային գործառնությունները, որից հետո ապրանքների բացթողնման վերաբերյալ հայտարարատուն կամ վերջինիս ներկայացուցիչն էլեկտրոնային եղանակով կստանան ծանուցում:

Միաժամանակ, ապրանքների հայտարարագրի գծով իրականացվող մաքսային գործառնությունների ժամանակ լրացուցիչ փաստաթղթերի կամ տեղեկությունների ճշտման անհրաժեշտության դեպքում, մաքսային ծառայողները հայտարարատուների հետ նույնպես շփվելու են տվյալ էլեկտրոնային համակարգի միջոցով:

Միաժամանակ, ՊԵԿ-ը տեղեկացնում է, որ մինչեւ 2025 թվականի հունվար ամսվա ավարտը, «Ծանուցման» էլեկտրոնային համակարգին անցում կկատարեն նաեւ Գյումրիում, Վանաձորում եւ Սիսիանում գտնվող մաքսային մարմինները, ինչի վերաբերյալ կտեղեկացվի լրացուցիչ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԾՐԱԳԻՐ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն ընդունել է Վիշեգրադյան միջազգային հիմնադրամի գործադիր տնօրեն Մայա Վավժիկի գլխավորած պատվիրակությանը:

Վիշեգրադյան միջազգային հիմնադրամի պատվիրակությունը Հայաստան է ժամանել «Հայաստան-ԵՄ ռազմավարական գործընկերության խթանումը Վիշեգրադյան քառյակի փորձի հիման վրա» խորագրով եզրափակիչ համաժողովին մասնակցելու նպատակով:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը ողջունել է հյուրերին եւ կարեւորել Վիշեգրադյան խմբի երկրների՝ Չեխիայի, Հունգարիայի, Լեհաստանի եւ Սլովակիայի հետ համագործակցության խորացումը կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում: Նախարարի տեղակալն ընդգծել է, որ Հայաստան-ԵՄ համագործակցության համատեքստում կարեւոր ուղղություն է նաեւ Վիշեգրադյան քառյակի հետ համագործակցության ընդլայնումը:

Արթուր Մարտիրոսյանն շեշտել է՝ Եվրոպական միությունը ԿԳՄՍ նախարարության նշանակալի գործընկերներից է, իսկ Եվրոպական միության հետ համագործակցությունն ամրագրված է Հայաստան-ԵՄ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով, որի մի շարք կետեր վերաբերում են ԿԳՄՍ նախարարության համակարգման ոլորտներին:

Անդրադառնալով Վիշեգրադյան խմբի շրջանակում համագործակցության զարգացմանը՝ նախարարի տեղակալը կարեւորել է՝ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում տարբեր ծրագրերի իրականացման խթանման առումով ազդակներ ստացվել են նաեւ քաղհասարակության կողմից:

Արթուր Մարտիրոսյանն անդրադարձել է նաեւ «Էրազմուս+» ծրագրին, որը Հայաստան-ԵՄ համագործակցության արդյունավետ գործիքներից է բարձրագույն կրթության ոլորտում: «Հորիզոն Եվրոպա» ծրագիրը նախատեսված է գիտության, «Ստեղծագործ Եվրոպան»՝ մշակույթի ոլորտներում համագործակցության խթանման համար: Նախարարի տեղակալի ընդգծմամբ՝ նշված բոլոր ուղղություններով համագործակցության թիրախները համահունչ են ՀՀ կառավարության 2021-2026 թվականների եւ ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրերին:

Վիշեգրադյան միջազգային հիմնադրամի գործադիր տնօրեն Մայա Վավժիկը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ ընդգծել Հայաստանի՝ Եվրամիության հետ համագործակցության ընդլայնման պատրաստակամությունը: Նրա խոսքով՝ հիմնադրամի նպատակն է խթանել եւ զարգացնել մշակութային համագործակցությունը գիտության, հետազոտության, կրթության եւ երիտասարդության փոխանակման ոլորտներում ինչպես նշված չորս երկրների, այնպես էլ գործընկեր այլ պետությունների միջեւ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաեւ կրթաթոշակային տարբեր ծրագրին, որոնք նախատեսված են Վիշեգրադյան չորս երկրների եւ գործընկեր պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ համապատասխան քաղաքացիություն ունեցող հետազոտողների, ուսումնասիրողների եւ սովորողների համար: Հայաստանի Հանրապետությունը եւս, ի թիվս Վրաստանի, Մակեդոնիայի, Մոլդովայի, Չեռնոգորիայի, Սերբիայի, Ալբանիայի եւ մի շարք այլ երկրների, ընդգրկված է ծրագրում :

Մայա Վավժիկը տեղեկացրել է՝ Վիշեգրադի կրթաթոշակները նախատեսված են բակալավրիատում, մագիստրատուրայում սովորող ուսանողների եւ հետազոտողների համար՝ մինչեւ չորս կիսամյակ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի ավելի քան 190 բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանելու նպատակով: Այս համատեքստում կողմերը կարեւորել են Հայաստանից ավելի մեծ թվով ուսանողների ներգրավվածությունը ծրագրին:

Նշվել է նաեւ, որ Վիշեգրադյան միջազգային հիմնադրամն աջակցում է Հայաստանի բուհերի եւ քաղաքակի անդամ երկրների բուհերի միջեւ համագործակցության խորացմանը:

ՀՀ ԿԳՄՍՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԱԿԱՐԳ

«ՀայԱրտ» մշակութային կենտրոնում ՀՀ-ում Եվրոպական միության դեսպան Վասիլիս Մարագոսի նախաձեռնությամբ տեղի է ունեցել ԵՄ անդամ պետությունների դեսպանների հանդիպումը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի հետ:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Անդրադառնալով նախորդ տարում գրանցած հաջողություններին՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել դեսպաններին իրենց կարեւոր հանձնառությունների համար:

«ԵՄ-ի հետ մեր համագործակցությունը, համատեղ ջանքերն ու աշխատանքը զարգացման օրակարգ են ապահովում Հայաստանի համար: ԵՄ-ի հետ մեզ միավորում են մարդու իրավունքների, ժողովրդավարական, ավելի արդար եւ ազնիվ աշխարհում ապրելու արժեքները: Այս համատեքստում չափազանց մեծ է կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության, սպորտի ոլորտների նշանակությունը, որտեղ մարդկային կապիտալը զարգացման շարժիչ ուժն է»,- ասել է նախարարը:

Շեշտադրելով համագործակցության ուղղությունները՝ Ժաննա Անդրեասյանն առանձնացրել է Կրթության զարգացման մինչեւ 2030 թ. ռազմավարության շրջանակում իրականացվված եւ ընթացող Հայաստան-ԵՄ համատեղ աշխատանքը: Նախարարն առանձնակի կարեւորել է նաեւ գիտության եւ մշակույթի ոլորտների համագործակցությունը՝ շեշտելով ուղիղ կապերի զարգացման եւ երկխոսության ամրապնդման կարեւորությունը:

Ներկաներին ողջունել է նաեւ ՀՀ-ում Եվրոպական միության դեսպան Վասիլիս Մարագոսը: Դեսպանը շեշտել է Հայաստանի հետ արդյունավետ համագործակցությունը կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում՝ կարեւորելով համատեղ իրականացված ծրագրերի ու ձեռքբերումների շարունակականությունը:

ՀՀ ԿԳՄՍՆ

ՔԱՆԻ՞ ԶԲՈՍԱՇՐՋԻԿ Է ԱՅՑԵԼԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ 2024-ԻՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեն հրապարակել է 2024 թվականի դեկտեմբեր ամսին դեպի Հայաստան զբոսաշրջային այցելությունների վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

2024 թվականի դեկտեմբերին Հայաստան այցելել է 130,148 զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 132,709-ի համեմատ:

Դիտարկվող ժամանակահատվածում դեպի Հայաստան առավել շատ զբոսաշրջային այցելություններ գրանցվել են Ռուսաստանից (43.1%), Վրաստանից (13%) եւ Իրանից (8.4%):

ՄԱՐՔԱԿԱՆ

ԲՐԱԶԻԼԱՑԻ ՓՈՐՁԱՌՈՒ ՊԱՇՏՊԱՆԸ ՏԵՂԱՓՈԽՎԵՑ «ՆՈԱ»

Երեւանի «Փյունիկի» բրազիլացի ձախ պաշտպան Ջեյմս Սանթոսը տեղափոխվել է «Նոա», հայտնում է «Նոայի» մամուլի ծառայությունը:

29-ամյա ձախ պաշտպանը հաջողությամբ անցել է բժշկական հետազոտությունը եւ պատրաստ է միանալ «Նոային»: Բրազիլացի խաղացողը Հայաստան է տեղափոխվել 2019 թվականին եւ հանդես է եկել «Արարատ», «Ուրարտու», «Ալաշկերտ» եւ «Փյունիկ» ակումբներում: 2021/22 մրցաշրջանում «Ալաշկերտի» կազմում Ջեյմս Սանթոսը իր նորամուտը նշեց Կոնֆերենցիաների լիգայի խմբային փուլում:

«Նոայի» նորեկը խոսել է իր նպատակների մասին թիմին միանալուց հետո:

«Շատ ուրախ եմ միանալ «Նոային»: Ցանկանում եմ աջակցել նոր թիմակիցներիս, կերտել շատ հաղթանակներ եւ ակումբի համար բազմաթիվ տիտղոսներ նվաճել»:

Նշենք, որ սա «Նոայի» առաջին համալրումն էր այս տրանֆերային պատուհանի ընթացքում:

ԲՈԼՈՐ ՊԱՐՏԻԱՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ ՈՉ-ՈՔԻ

Հայաստանի շախմատի տղամարդկանց առաջնության 3-րդ տուրի պարտիաներն ավարտվել են ոչ-ոքի արդյունքով:

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանը շարունակվում է Հայաստանի տղամարդկանց 85-րդ առաջնությունը:

Այս տուրում միավորը կիսեցին Բենիկ Ագասարով-Արթուր Դավթյան, Մամիկոն Ղարիբյան-Տիգրան Հարությունյան, Մանուէլ Պետրոսյան-Կարեն Գրիգորյան, Ջավեն Անդրիասյան-Հովիկ Հայրապետյան, Սարգիս Սարգսյան-Ռոբերտ Հովհաննիսյան զույգերը:

Հայաստանի առաջնության առաջատարներն այս տուրից հետո 2-ական միավորով 4 շախմատիստներն են՝ Մամիկոն Ղարիբյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Ջավեն Անդրիասյանը, Արթուր Դավթյանը:

Վ. ԲԻՉԱԽՉՅԱՆԸ՝ «ԼԵԳԻԱ»-Ի ՖՈՒՏԲՈԼԻՍՏ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Վահան Բիչախչյանը պաշտոնապես տեղափոխվեց լեհական այլ ակումբ:

Վահան Բիչախչյանը պայմանագիր է կնքել Վարշավայի «Լեգիա»-ի հետ: Հայ կիսապաշտպանի պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2027 թվականը:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Վահան Բիչախչյանը մինչ այս հանդես էր գալիս «Պոգոն»-ի կազմում, որտեղ տեղափոխվել էր 2022 թվականին:

● *Հունվարի 29-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Կաբարե ռեստարտ» 16+ պներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ պարտավորություն ունի նպատակային ուսուցմամբ (պայմանագրային հիմունքներով գործուղված) ուսանողը:

Կանրինե Մելքոնյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նպատակային ուսուցմամբ ուսանող համարվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար պետությունը երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային կարգով անվճար բարձրագույն եւ հետբուհական կրթություն ստանալու իրավունք: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցույթից առանձնացված՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգի: Նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է նաեւ հետեւյալ պայմանը. ուսանողը ավարտելուց հետո առնվազն 3 տարի ժամկետով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գործուղվում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում:

Այս պայմանը չկատարելու դեպքում շրջանավարտը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում պարտավոր է փոխհատուցել ուսումնառության տարիների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի եւ պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է, եթե տեղափոխման պահին ուսումնառած ծրագրի եւ ընդունող ծրագրի բովանդակությունների տարբերությամբ պայմանավորված՝ առարկայական տարբերությունների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը, հակառակ պարագայում ուսանողին առաջարկվում է փոխադրվել ավելի ցածր կիսամյակում կամ այլ հարակից մասնագիտությամբ սովորելու, որի դեպքում առարկայական անհամապատասխանությունների նշված պահանջը բավարարվում է:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե որ օրվանից է նշանակվում կենսաթոշակը:

Վարսեր Եղիկյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ կենսաթոշակ նշանակվում է՝

կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու օրվանից (բայց ոչ շուտ, քան կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից), եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում,

բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում,

կերակրողի մահվան (օրենքով սահմանված դեպքում՝ անհայտ կորելու) օրվանից (բայց ոչ շուտ, քան կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից), եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է կերակրողի մահվան (օրենքով սահմանված դեպքում՝ անհայտ կորելու) օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում,

զինծառայությունից արձակվելու օրվանից, եթե սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված զինծառայողը դիմել է այդ օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշված ժամկետներից հետո դիմելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանն ընթացող տղամարդկանց 85-րդ առաջնությունում ավարտվել են 4-րդ տուրի բոլոր պարտիաները:

Այս տուրում հաղթանակ տոնեցին Բենիկ Ագասարովը եւ Սարգիս Սարգսյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 -20 -2 + 2
Կոտայքի լեռներ	-10 -15 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-8 - 11 -2 + 1
Լոռի	-4 - 8 +7 + 10
Տավուշ	0 -2 +3 + 6
Արագածոտնի լեռներ	-15 -18 -2 + 2
Արագածոտնի նախալեռներ	-5 - 9 -2 + 2

Արարատ	0 - 5 +2 + 4
Արմավիր	-2 - 5 +2 + 4
Վայոց ձորի լեռներ	-6 - 9 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +2 + 5
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	0 + 3 + 7 + 10
ԼՂՀ	-2 - 6 + 8 + 10
Երեւան	-1 - 3 0 + 2

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.1.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*